ՍԵԴՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
(Ծննդյան 110-ամյակի առթիվ)

Հայագիտության նվիրյալ. սա է Սեդրակ Բարխուդարյան մարդու, գիտնականի հակիրճ կատարյալ բնութագրականը:

Մասնագիտական լայն մտահորիզոնի և գիտելիքների տիրապետմամբ, պատմագիտական բազմաբովանդակ հետաքրքրությունների դրսևորմամբ Ս. Բարխուդարյանը թողել է մնայուն հետք հայագիտության մեջ: Նրա աշխատությունները անհրաժեշտաբար ընդգրկված են հայոց պատմության ամենատարբեր դարաշրջանների ու բնագավառների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների առաջնահերթ օգտագործման գրականության ցանկերում:



Ս. Բարխուդարյանի գիտական ստեղծագործությունը խարսխված էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում ուսումնառության տարիներին ձեռք բերած հիմնավոր գիտելիքների վրա, իսկ հետազոտությունների հիմնական առարկան հայ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի պատմական ժառանգությունն է եղել:

Գիտական գործունեության առաջին տասնամյակում նրա ուսումնասիրությունները սևեռվում են Հայկական լեռնաշխարհի նախաուրարտական և ուրարտական դարաշրջանների պատմության հարցերին: Դեռևս Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումում դասավանդելու և հետագա տարիներին նա ուսումնասիրում է տարածքի վաղ շրջանի հնագիտական հուշարձանները, սեպագիր և արամեերեն արձանագրությունները, մի շարք վայրերում կատարում հնագիտական պեղումներ: Ս. Բարխուդարյանի պատմահնագիտական այս պրպտումների արգասիքն է դառնում նրա առաջին ծավալուն ուսումնասիրությունը՝ նվիրված Ծովինար գյուղի մերձակայքում հայտնաբերված ուրարտերեն սեպագրում հիշատակված Վելիքուխե երկրին, 1933 թ. արժանացավ «Մելքոնյան» մրցանակի:

XX դարի 30-ական թվականներին գիտնականի աշխատանքային գործունեությունը մեծապես կապված է եղել Հայաստանում պատմամշակութային հուշարձանների պահպանության գործին: Ի պաշտոնե ընդգրկված լինելով այդ

բնագավառի պետական մարմնի աշխատանքներում՝ նա հնագիտական պեղումներին զուգընթաց լայն մասնակցություն է ունեցել հուշարձանների տեղային ուսումնասիրության, հաշվառման, քարտեզագրման, անձնագրավորման աշխատանքներին: Այս բնագավառի կարևոր տեսական ձեռքբերում կարելի է դիտարկել խորհրդային տարիներին հրապարակված, իր տեսակի մեջ առաջին աշխատությունը՝ «Սովետական Հայաստանի հնությունների տեսակներն ու նրանց պահպանության անհրաժեշտությունը» (Երևան, 1935 թ.):

Պատմագիտության բնագավառում Ս. Բարխուդարյանի ստեղծագործական ներդրումների մի զգալի հատված առնչվում է Արցախի և հարևան անդրկուրյան տարածքների հայաբնակության պատմության մի շարք առանցքային խնդիրներին: Այդ թեմատիկային էին նվիրված «Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը» (ՊԲՀ, 1969, -3), «Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դդ.» (ՊԲՀ, 1971, -1) ծավալուն և արժեքավոր հոդվածները և «Ակնարկներ հայ-աղվանական հարաբերությունների պատմությունից» անտիպ մենագրությունը:

Ս. Բարխուդարյանը, չնայած իր գիտական հետաքրքրությունների և ստեղծագործությունների բավական լայն ու բազմաբովանդակ ընդգրկման, հայագիտության մեջ առավել հայտնի է որպես խոշորագույն վիմագրագետ, այդ բնագավառի երևելիներ Ն. Մառի և Հ. Օրբելու արժանավոր հետևորդ: Քաջատեղյակ լինելով այդ նշանավոր ուսուցչապետերի վիմագրագիտական ժառանգությանը և վիմագրերի հավաքման, վերծանության, մեկնաբանման ու հրատարակման նրանց որդեգրած և զարգացրած սկզբունքներին ու մեթոդներին, Ս. Բարխուդարյանը մեծագույն ներդրում ունեցավ հայ վիմագրագիտության մեջ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նախաձեռնությամբ կյանքի կոչվեց դեռևս Հովսեփ Օրբելու մտահղացած «Դիվան հայ վիմագրության» վիմական արձանագրությունների մատենաշարի պատրաստումն ու հրատարակումը: Հայագիտության համար աղբյուրագիտական այս եզակի ու խիստ անհրաժեշտ ժողովածուների կազմման աշխատանքներն ի սկզբանե ղեկավարեց Սեդրակ Բարխուդարյանը: Վիմագրական բազմաթիվ արդյունավետ արշավախմբերի միջոցով նա և իր ղեկավարած բաժնի աշխատակիցները հավաքեցին, վերծանեցին ու հրատարակության պատրաստեցին Հայաստանի և Արցախի տարբեր շրջանների պատմամշակութային հուշարձանների վրա եղած հազարավոր վիմագրեր: Այդ աշխատանքների շնորհիվ XX դարի 60-ական թվականներից սկսվեցին հրատարակվել «Դիվան»-ի հատորները: Առաջին պրակը նվիրված էր պատմական Անի մայրաքաղաքի արձանագրություններին: Գրքի կազմող-հեղինակ Հ. Օրբելին իր երախայրիքի խմբագրությունն ու հրատարակությունը պատգամել էր Սեդրակ Բարխուդարյանին: Վերջինիս ընդարձակ ու հմտալից առաջաբանով պրակը լույս տեսավ 1966 թվին (266 արձ.):

Մատենաշարի հաջորդ չորս պրակների կազմողը Ս. Բարխուդարյանն էր: 1960 թ. հրատարակվեց Սյունյաց աշխարհի Գորիսի, Սիսիանի և Ղափանի տարածաշրջանների վիմական արձանագրություններն ընդգրկող երկրորդ պրակը (421 արձ.): Երրորդում ամփոփված էին Վայոց ձորի հուշարձանների թվով 813

վիմագիր (1967 թ.): Չորրորդ, առայժմ ամենաընդարձակ (1547 արձ.) հատորում տեղ էին գտել Գեղարքունիքի, Վարդենիսի, Մարտունու և Կամոյի շրջանների արձանագրությունները (1973 թ.): Արցախի պատմության ուսումնասիրման համար անգնահատելի արժեք է ներկայացնում հինգերորդ պրակը (1071 արձ., 1982 թ.):

Ս. Բարխուդարյանը, «Դիվան»-ի կազմման աշխատանքներին զուգընթաց, օգտագործելով վիմագրական հսկայածավալ ու բազմաբովանդակ նյութեր, առանձին բարձրարժեք ուսումնասիրություններ է նվիրել արձանագրությունների քննությանն ու դրանց պարունակած ուշագրավ փաստերի, իրադարձությունների, երևույթների, բառեզրերի վերլուծությանն ու մեկնաբանությանը, դրանց աղբյուրագիտական արժեքի գնահատմանը: Հատկանշական են «Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ» (1947 թ.), «Էջմիածնի ավետարանի գրչության վայրը» (1958 թ.), «Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում» (1966 թ.), «Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի» (1967 թ.), «Սոցիալ-տնտեսական բովանդակության արձանագրություններ և դիտողություններ» (1971 թ.) և բազմաթիվ այլ հոդվածներ:

Վիմագիր սկզբնաղբյուրների ընձեռած նյութի գիտական ու լիարժեք օգտագործման փայլուն օրինակ է Ս. Բարխուդարյանի բացառիկ հետազոտություններից մեկը, միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հուշարձանների և մանրաձև կոթողների՝ խաչքարեր ու տապանաքարեր արարողներին՝ այն է՝ միջնադարյան ճարտարապետներին ու ընդհանրապես քարգործ վարպետներին նվիրված հանրագիտարանային ուսումնասիրությունը՝ «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» (1963 թ.): Աշխատությունը կենսագրական ու գործառութային տեղեկություններ է պարունակում միջնադարյան 68 ճարտարապետների, խաչքարեր կերտող 139 կազմողների և վիմագրեր փորագրող 62 գրիչների վերաբերյալ:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում է պահվում Մեդրակ Բարխուդարյանի անտիպ ժառանգությունը, որի հրապարակումն ու գիտական շրջանառության մեջ դնելու պատվաբեր գործը իր հետնորդների, այդ մեծ գիտնականի և մարդու հիշատակը հարգող ու ավանդները շարունակողների սուրբ պարտականությունն է:

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

* * *

1930-ական թվականների սկզբներին հայագիտության ասպարեզ մտավ երիտասարդ, խոստումնալից գիտնական՝ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ղափանցյանի, հետագայում նաև Հ. Օրբելու կողմից գնահատված և սիրված աշակերտ Սեդրակ Բարխուդարյանը: Նա իր բարձր առաջադիմությամբ ու խոհեմությամբ, աշխատասիրությամբ և նպատակասլացությամբ գալիս էր հաստատվելու և գիտությունը իր ժողովրդին ծառայեցնելու առաքելությամբ: Մինչև 1937 թ. Ս. Բարխուդարյանը գրել է բազմաթիվ գիտական աշխատություններ և հոդվածներ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց դերն ու նշանակությունը:

Եկավ 1937 թվականը... Ս. Բարխուդարյանն անմասն չմնաց բռնություններից. շուրջ երկու տասնամյակ տևած բանտարկությունն ու աքսորը ընդհատեցին նրա ստեղծագործական կյանքը:

Տասը տարի անց՝ 1948 թվականին նա վերադարձավ և կարճատև մի շրջան ապրեց Երևանում (ընդամենը մի քանի ամիս), բայց շուտով նրան առաջարկվեց հեռանալ Հայաստանից. նա մեկնեց Աբխազիա: Հեռավոր մի գյուղում, հեռու մարդկանցից, միայնակ ու լուռ, գաղտնի ու չարքաշ ապրեց իր կյանքի ևս յոթ տարիները: Այստեղ էլ նա շարադրեց իր ու իր սերնդին վիճակված՝ Մագադանում և Կալիմայում անցկացրած բռնություններով լի կյանքի ողբերգական պատմությունները:

Լինելով պատմաբան, նրա ըմբռստ ոգին չէր կարող անհաղորդ մնալ ստալինյան բռնությունների հանդեպ: Նրա աչքերի առջև բռնությունների զոհ էին դառնում մշակույթներ, անհատականություններ, սերունդներ: Ս. Բարխուդարյանին վիճակված դառը ճակատագրի մի փորձություն էր նաև իր տեսածն ու վերապրածը թղթին հանձնելու, սերունդներին հաղորդակից դարձնելու առաքելության ստանձնումը:

Նման հուշերի պատմամշակութային կարևորության գիտակցմամբ ու արժևորմամբ էր պայմանավորված ժամանակին Պարույր Սևակի կողմից հնչած հետևյալ մտահոգությունը. «Ապագա սերունդները կգան ու ոչինչ չեն գտնի 1937-ին կատարվածի մասին: Արխիվները հասկանալի պատճառներով անմատչելի կմնան ...»[1]:

Ստորև ներկայացվող հուշերը Ս. Բարխուդարյանի անվերնագիր աշխատության առաջին գլուխն է: Ձեռագիրը գտնվում է նրա անձնական արխիվում՝ մեր տրամադրության տակ:

ԿԼԱՐԱ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

[1] *Սուրեն Ղազարյան. Դա չպետք է կրկնվի, Երևան, 1988, էջ 372–374: Այս գրքում է զետեղված Պ. Սևակի նամակը գրված հեղինակին 1968 թ. մայիսի 18-ին:*

ԱՀԱՋԱՆԳԸ

ՍԵԴՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Ռուսաստանը արհավիրքների պարբերական երկիր է. այնտեղ և բնական և հասարակական արհավիրքները կրկնվել են բնական ու պատմական օրինաչափությամբ՝ պարբերաբար, բայց երբեք Ռուսաստանի պատմության մեջ հասարակական արհավիրքներն այնքան արագորեն չեն հաջորդել իրար և այնքան սարսափելի ու համաժողովրդական չեն եղել, ինչպես վերջին 30 տարվա ընթացքում: Պերմանենտ հեղափոխության տեսության հորինողները պիտի սարսափեին, անշուշտ, տեսնելով իրենց տեսության կիրառման չափի ու խորության ծավալը իրենց ժրաջան «աշակերտների» կողմից:

Վերջին մեծագույն արհավիրքը տեղի էր ունեցել 29–30 թվերին: Դա համատարածի հետ էր կապված և սրբեց ու տարավ գյուղի ազգաբնակչության մեկ երրորդը՝ «կուլակ» անվան տակ ու մտավորականության մի զգալի մասը՝»աջեր» անվան տակ:

Անցել էր 5–6 համեմատաբար խաղաղ տարի, երբ միայն տեղական փոթորիկներ էին զգացվում, որոնք արդեն այնքան սովորական երևույթ էին դարձել, որ մեծ ուշադրություն չէին գրավում: 1936 թ. օգոստոս ամիսն էր ... հանկարծ Երևանում լուր տարածվեց, որ Ա. Խանջյանը սպանվել է Թիֆլիսում. լուրը կայծակի արագությամբ տարածվեց և բոլորի վրա շշմեցնող տպավորություն թողեց: Այն կրկնվում էր երկու տարբերակով. մեկ՝ որ ինքնասպանություն է գործել, և երկրորդ՝ որ սպանված է: Առաջին տեսության տարածողները պատասխանատու պաշտոնյաներ էին, իսկ երկրորդինը՝ սովորական քաղաքացիներ: Զարմանալին այն էր սակայն, որ մի մարդու մահը այսպես խիստ ալեկոծում էր քաղաքացիներին. բանտարկություն, աքսոր, մահ, սպանություն տասնամյակների ընթացքում սովորական բան էին դարձել: Այս դեպքում Խանջյանի պաշտոնն ու անձնավորությունն էլ մեծ դեր չէին խաղում անշուշտ: Շատ այդպիսիներն էին եկել ու գնացել, սա մի ինչ-որ արտասովոր երևույթ էր, տարիներով կուտակված լուռ ցասման պոռթկում, ժողովրդի կամքի ու լեզվի դաժան կապանքներով դրոշմված ճիչի արտահայտություն: Այս բոլորը սակայն երևան եկավ մի քանի օրից հետո:

Ես այդ ժամանակ քաղաքում էի մնացել Հ. Օրբելու ցանկությամբ, մի քանի օրով: Այս տարի Էրմիտաժն ու մեր հնագիտական ինստիտուտը միացյալ պեղումներ պիտի կատարեին Ամբերդի բերդում: Լենինգրադից եկել էին բոլոր մասնակիցները, որոնց միացան մի քանի հոգի մեր ինստիտուտից. հինգ օր առաջ արդեն մեկնել էին Ամբերդ: Գիտարշավի ղեկավար Օրբելին ինձ առաջարկեց մի քանի օր մնալ Երևանում իր հետ, գիտարշավի համար անհրաժեշտ գործերով, ու ես մնացի:

Ամբողջ օրերով միասին էինք շրջում զանազան հիմնարկներ՝ գիտարշավի հետ կապված գործերով և Օրբելին մեծ հաճույքով քայլում էր Երևանի փողոցներով՝ հրաժարվելով իրեն առաջարկվող մեքենաներից: Ես հասկանում էի նրա

հոգեվիճակը և լուռ հետևում նրան: Տասնամյակներով հայրենակարոտ նրա սիրտը գոհացում էր ստանում քայլել հայրենի քաղաքի փողոցներով և լսել հարազատ լեզվի երաժշտությունը: Հաճախ նա հանկարծ կանգ էր առնում փողոցում, հայացքով մատնանշում որևէ գյուղացու, որին հաճույքով դիտում էր և հարցնում ինձ. – Հապա, որտեղացի՞ է ասա: Ես նայում էի գյուղացուն և մեծ մասամբ դիմագծերի հիման վրա տալիս այս կամ այն գավառի անունը: Եթե պատասխանս գոհացնում էր նրան, նա բավականությամբ ժպտում էր ու գլխով հավանության նշան անում, սակայն պատահում էր, որ իմ պատասխանը չէր գոհացնում նրան, նա գլխով ժխտական նշան էր անում: Մի երկու դեպք էլ պատահեց, երբ մեր համառոտ վեճին վերջ տալու համար մենք խոսեցրինք մեզ հետաքրքրող մարդկանց, առանց որտեղացի լինելը հարցնելու և լեզվի միջոցով լուծեցինք մեր վեճը: Այժմ գյուղացոնց շորերը միատեսակ ցնցոտիներ են, գավառական տարազի սովորությունը մեռավ այս տասնամյակների ընթացքում՝ աղքատության, մանավանդ կտոր չճարվելու հետևանքով:

Օրը կիրակի էր: Թերթի առաջին երեսին տպված էր Խանջյանի մասին համառոտ մահազդ-կենսագրական, որտեղ կշտամբվում էր նա, որպես անկայուն բոլշևիկ, որ դժվարությունները հաղթահարելու կամքի փոխարեն, նա թուլահոգի գտնվեց և դիմեց անձնասպանության, սակայն այդ հայտարարության չոր ու ցամաք ոճը ոչ ոքի չէր բավարարում: Այդ օրը Օրբելին առաջարկեց սև շուկա տանել իրեն, այնտեղից որոշ իրեր գնելու համար, որոնք խանութում չէին ճարվում: Ես զգում էի, որ նա բացի այդ գործից նաև ներքին բավականություն է զգում հայ ամբոխի մեջ լինելուց: Ոտքով գնացինք մինչև սև շուկա, որը բավական հեռու էր գտնվում՝ Մարքսի փողոցի ծայրին: Հազիվ էինք շուկայի դռնից ներս մտել և փոքր առաջացել դեպի ներս, երբ մի սարսափելի խլրտոց սկսվեց ամբոխի մեջ, բոլորը սկսեցին իրար կոխկրտելով դեպի մուտքը դիմել, քշելով ու տանելով բոլորին: Ամբոխի ալիքը մեզ էլ իր մեջ առավ ու մեր կողերը ջարդոտելով դուրս շպրտեց շուկայի լայն դռներից: Փողոցում նույն արտասովոր հրմշտոցն էր ու ծովածավալ ամբոխի ալիքը դիմում էր դեպի կայարանից եկող լայն փողոցը. բոլորը ճիչեր էին արձակում՝ կին, տղամարդ, երեխաներ: Քիչ ուշքի գալով փողոցում, ես հարցրի կողքիս կանգնած մի կնոջ, որն իր ձեռքերի վրա ծախելիք ճմռված շորերն էր փաթաթում, թե ի՞նչ է պատահել: Կինը նայեց ինձ զարմացած և կշտամբանքի տոնով պատասխանեց. – Խանջյանին են բերում: Մենք նոր գլխի ընկանք, թե ինչն էր խլրտման պատճառը: Ես առաջարկեցի Օրբելուն, որ հեռանանք ժխորից: Նա լուռ նայեց ինձ, ապա բռնելով իմ թևից քաշեց իր ետևից ու մենք մտանք ժխորի մեջ: Մեծ դժվարությամբ հասանք կայարանի և Մարքսի փողոցները միացնող անկյունին և ամբոխը մի կերպ ճեղքելով հասանք առաջին շարքին: Փողոցի երկու կողքերին կանգնած էին միլիցիոներները, իրար շատ մոտ և չէին թողնում ժողովրդին իջնել մայթերից. ամբողջ փողոցը աջ ու ձախ դատարկ էր: Միլիցիոներներն անզոր գտնվելով կարգը պաշտպանել, իրար միացրին առաջին շարքերում կանգնած մարդկանց ձեռքերը և կազմվեց մի կենդանի շղթա. մեր ետևից անվերջ սեղմում էին և դիմադրելը սաստիկ դժվար էր, իսկ հանդիպակաց նեղ մայթի վրա կանգնելն ավելի հարմար էր: Այդ նկա-

տեց Օրբելին, նա կռացավ և ձեռքի շղթայի տակից դուրս եկավ դատարկ փողոց, ինձ էլ քաշելով ետևից: Միլիցիոները մեզ նկատելով վազեց մեր դեմ և կոպիտ խոսքերով սկսեց հետ մղել: Օրբելին կանգնեց հանգիստ, իսկ երբ միլիցիոները սկսեց բռթել մեզ, նա իր ահռելի ձայնով բղավեց. – «հեռու» և հանելով գրպանից կառավարության անդամի տոմսը ցույց տվեց միլիցիոներին: Մենք անարգել անցանք հանդիպակաց մայթը և հանգիստ կանգնեցինք սյան տակ: Դատարկ փողոցով սկսեցին անցուդարձ անել նաև ձիավոր զինվորները: Քիչ հետո կայարանի կողմից լսվեց երաժշտության ձայն: Ամբոխը մի մարդու պես վերցրեց գլխարկները: Անցան ձիավոր զինվորները և հեռվից երևաց մի բեռնակիր մեքենա, որի կողքերից կախված էին կարմիր կտորներ: Մեքենան դանդաղորեն մոտեցավ: Նրա վրա բարձր պատվանդան էր շինված ու ծածկված կարմիր կտորներով, վրան դրված էր դագաղը, մեքենայի ճակատին փակցված էր Խանջյանի մեծադիր լուսանկարը սև կտորներով ծածկված շրջանակի մեջ և մի քանի ծաղկեպսակներ: Մեքենայի ոչ առջևից, ոչ ետևից քայլողներ չկային: Մի չորս-հինգ մարդատար մեքենաներ էին երևում, որոնց մեջ երկրորդական, երրորդական կարգի կառավարական պաշտոնյաներ էին, իսկ մի երկուսը նույնիսկ դատարկ էին բոլորովին: Զգացվում էր բարձր շրջանների շփոթությունն ու անկողմնորոշությունը: Բոլորն էլ աշխատում էին խույս տալ. ոչ ոք չգիտեր դեռ ինչ դիրք է բռնելու կենտրոնը:

Օրբելու հետ մենք վերադարձանք, երբ թափորն անցավ. մենք լուռ էինք ու գլխիկոր: Երևույթը և՛ տարօրինակ էր, և՛ անորոշ ու կասկածելի: Բոլորի դեմքին զգացվում էր չարագուշակ գալիք-նախազգացմունքը: Մյուս օրը մենք մեկնեցինք Ամբերդ: Մի քանի օրից քաղաքից եկողները սկսեցին մեզ շշուկով տարօրինակ բաներ պատմել, որոնք տեղի էին ունեցել Խանջյանի թաղման օրը:

Նախօրոք որոշված է եղել դագաղը դնել կուլտուրայի տան դահլիճում և մուտքն ազատ թողնել հասարակության համար, սակայն կայարանից մինչև կուլտուրայի տուն հասցնելու ժամանակ ժողովրդի անսովոր կուտակումն ու հետաքրքրությունը և որոշ տեղերում կարգ խանգարելը առիթ են հանդիսացել խոհեմաբար դիակն ուրիշ տեղ տանելու և թաքցնելու:

Մի քանի օրից հետո առանց հայտարարելու այդ մասին՝ տանում են թաղելու Կոնդի գերեզմանատանը: Դեպի Կոնդ տանող բոլոր փողոցները լցված են եղել ոչ միայն հետևակ ու ձիավոր միլիցիոներներով, այլև բերված են եղել սահմանապահ զորքեր: Տարօրինակ նախազգացումով, որ միայն ամբոխին է հատուկ, ժողովուրդը կռահել է, որ Խանջյանի թաղման առթիվ է այդ բոլորը: Կուտակվել է Երևանի համար չտեսնված բազմություն: Միլիցիոներներն ու զորքը աշխատել են արգելել ժողովրդի հոսքը դեպի Կոնդ՝ ամբոխը կատաղել է ու հորձանք տալով, սպառնագին աղաղակներով, քարեր նետելով զինվորների վրա փշրել է բոլոր շղթաները: Տասնյակ փողոցներում տեղի է ունեցել նույն բանը և Կոնդ տանող փողոցներով ժողովրդի հեղեղը սրբելով ամեն խոչընդոտ, իրար կոխկրտելով, իրար ոտքերի տակ տալով, բակերով, պատերի վրայով հեղեղել է Կոնդը մի քանի տասնյակ հազար մարդ: Տասնյակ տարիներով կուտակված ցասումը,

կուրծքը պատռող չասված ճշմարտությունները, որոնք խնամքով ծածկվել էին յուրաքանչյուրի մեջ, այսօր ամեն մարդ դադարելով անհատ դառնալուց, լուծվելով ամբոխին, դառնալով նրա մի մասնիկը, մոռանում է ամեն մի կապանք և այդ ահռելի մարդկային ֆիզիկական և հոգեկան ժխորի օրենքին ենթարկվելով գործում է որպես նրա մասը: Հազարավոր տեղերից բացականչում են՝ վրացիներն են սպանել նրան, բոլոր մեր պետական լավ գործիչներին նրանք սպանում են, չկա արդարություն, սուտ է ազգային քաղաքականությունը, և բազմաթիվ այլ նման խոսքեր: Մեքենաներով անցնող կառավարական և կենտկոմի անդամներին բարձրաձայն ծաղրում են՝ վախկոտներ, ստրուկներ և քարերով նետահարում: Այդ օրն իրոք որ տարօրինակ օր է եղել երևանցիների համար: Այժմ տարիներ անց, երբ երևանցիները հիշում են այդ օրը, իրենք էլ են զարմանում: Ամբոխային հոգեբանությունն այնքան վարակիչ է եղել, որ քշել տարել է ոչ միայն հասարակ ժողովրդին, տղամարդկանց ու կանանց, այլև ծերերին ու երեխաներին, մտավորականությանը և կոմունիստներին: Ամբոխը եղել է համերաշխ, միահոգի, գոնե մի օրով լուծվել են տարիներով պատվաստված զզվելի, անբարոյականացնող մատնությունները, իրար խոսքեր գրելն ու տեղ հասցնելը: Այդ բոլորը երևան եկան տարիներ հետո: Բանտերում և աքսորներում ոչ ոք չգանգատվեց, որ այդ օրն իր արտասանած խոսքերը հայտնի են եղել շուկայում, մինչդեռ ամեն ոք իր կյանքում որևէ տեղ ամենամտերիմ շրջանում թեթև դժգոհության շեշտ կրող բոլոր խոսքերը ուռեցրած, բազմապատկված, շուռ տված վիճակում գտնվում էր քննիչների թղթապանակում՝ «անձնական գործի» մեջ:

Օ՜, ամբոխային սրբազան, սրբող, եղբայրացնող հոգեբանություն ...

Կառավարությունն այնքան էր շշմել, որ չհամարձակվեց այդ օրը ոչ մի խստության դիմել և ոչ էլ՝ ձերբակալել: Գուցե այդ նրանից էր, որ նրանք իրենց գլխին ևս աղետ էին զգում և ժողովրդի այդ վերաբերմունքի մեջ մոտավոր սարսափի դեմ հոգեկան հենարան որոնում:

Այդ մահվան մասին ճշմարտությունը չիմացավ ժողովուրդը ոչ այդ օրը, ոչ տարիներ հետո և ոչ էլ՝ այսօր: Առաջին վախլիկ մահազդին հետևեցին նույնքան վախլիկ ու անորոշ դամբանակները, որ ասվեցին պաշտոնական մարդկանց կողմից գերեզմանատանը, որոնց մեջ միայն թեթև կշտամբանքի տոն կար, որ հեղափոխական բոլշևիկին վայել չէ ինքնասպանությունը, որ թուլության նշան է. և միայն այդքան: 1937 թ. սկսած տոնն ավելի խստացավ. թերթերում սկսեցին արդեն դավաճան, հակահեղափոխական ածականներ տրվել և դրա համեմատ էլ աճյունը վռնդվեց գերեզմանատան պատվավոր վայրից. ավելի հետո՝ նացիոնալիստ, Միությունից Հայաստանն անջատելու խմբակի ղեկավար և այլ տիտղոսներ տրվեցին, բայց այդ բոլորն էլ իհարկե հավուր պատշաճի սովորական երևույթներ էին, որոնց ժողովուրդը վաղուց ի վեր վարժվել էր և բոլորովին չէր հավատում:

Մահը մնաց գաղտնիք, իսկ գաղտնիքը ենթադրությունների ծնողն է, իր բոլոր ենթադրությունների մեջ ժողովուրդը աստիճանաբար սրբեց, մաքրեց, ջնջեց նրա ձեռքով կատարված վատությունները, և նրան դարձրեց իր շահերի համար զոհված մարտիրոս և այդպես էլ պահում է նրան իր սրտում, հակառակ պաշտ-

ոնական բոլոր բազմապիսի հայհոյանքների: Ճի՞շտ է ժողովրդի ենթադրությունը, թե ոչ, աստվածը գիտե, բայց խոշտանգված, տառապած մարդկությունը կարիք ունի մարտիրոսների և նա կստեղծի նրանց և ստեղծում է նրանց՝ իրենց բավարարելու և մխիթարելու համար: Միշտ չէ, որ նրանք արժանի են այդ կոչմանը, բայց դա միևնույն է. թաղման օրը ամբոխային ավերող ու ստեղծագործող հոգեբանությունը նահատակի պահանջ ուներ և նրան տվեց այդ կոչումը: Ամբոխի շինած կուռքը սուրբ է, նա երկար է ապրում և անհատները ջարդել չեն կարող:

...Մենք պեղումներից վերադարձանք ուշ աշնանը, հոկտեմբերին: Մեր տրամադրությունը շատ բարձր էր: Պեղումների բացառիկ լավ արդյունքները, պեղող կոլեկտիվի անդամների մեծամասնության գիտական ու մարդկային բարձր հատկությունները, մանավանդ ղեկավարի բացառիկ հայրական, մարդասիրական և կենսուրախ բնավորությունը միացած գիտական խորաթափանցության հետ ստեղծել էին այնպիսի սերտ համակրելի միջավայր, որ յուրաքանչյուրս, չնայած մեր ֆիզիկական հոգնածության, ափսոսանքով էինք հեռանում Արագածի փեշերին փռված այդ հոյակապ ավերակներից: Ղեկավարի հանդեպ ունեցած գիտական ու հայրական ճշմարիտ ակնածանքն ու համակրանքը ստեղծել էին մի իսկական նահապետական բազմանդամ ընտանիք, ոչ միայն գիտական բազմազգ աշխատողներից, այլև մեզ հետ աշխատող 150-ի չափ բանվորներից: Բանվորներն աշխատանքի վերջին օրվա երեկոյան հավաքվել էին մեր բնակարան-եկեղեցու և վրանների առաջ ու չէին ուզում հեռանալ: Լսեցինք սրտառուչ ճառեր նրանց կողմից, որոնց պատասխանեց ղեկավարն իր պերճ ու կրակոտ լեզվով, հույս հայտնելով, որ եկող գարնանը նորից կհանդիպենք այստեղ իրարու: Բոլորը գրկախառնվեցին, շատերը փորձում էին ղեկավարի ձեռքը համբուրել. նա հուզված մերժում էր և գրկախառնված համբուրվում այդ պարզ ու ազնիվ մարդկանց հետ:

Երևան հասած երկրորդ օրը սակայն իմ և մի քանիսի երջանիկ հոգեվիճակը թունավորվեց: Կանչելով իր առանձնասենյակ մեր ինստիտուտի դիրեկտոր Հ. Զորյանը հարցրեց թեև մեղմ, բայց ներքին մեծ հուզումով.

– Բարխուդարյան, ինչպիսի՞ բաժակաճառեր են ասվել Ամբերդում:

Ես մնացի շվարած: Ամբերդում խմելն արգելված էր եղել պեղումների ամբողջ ընթացքում թե՛ գիտական աշխատողների և թե՛ բանվորների համար: Դա ղեկավարի սկզբունքն էր, որը կիրառվել էր ճշտությամբ, միայն 2-3 հոգու ես գիտեի, որոնք մի քանի անգամ գաղտնի կերպով մի շիշ օղի բերեցին մոտակա գյուղից և լուսանկարչի մութ սենյակում խմեցին, այն էլ մեկ-մեկ մտնելով այնտեղ և միայն մի բաժակ թաքուն խմելով: Ես հուզված պատասխանեցի, որ Ամբերդում խմիչքն արգելված է եղել ընդհանրապես:

Մատնիչի տեղեկությունը սակայն այնքան մանրամասն է եղել, որի հիման վրա Զորյանը կարողացավ ինձ հիշեցնել իրոք խմելու մի դեպք: Դեպքն այսպես էր տեղի ունեցել, երբ Երևանից պիտի մեկնեինք, Օրբելին ինձ մի խանութ մտցրեց ասաց, որ 3 շիշ կոնյակ վերցնեմ, ես վերցրի ու տարանք հետներս:

Ամբերդ մենք գնում էինք Աշտարակ-Բյուրական-Ինաքլու գյուղերի վրայով: Վերջին՝ Ինաքլու գյուղից մինչև Ամբերդ 3-4 կմ է և մենք Ինաքլուից ոտքով էինք գնում: Երեկոյան կողմն էր, երբ մենք դուրս եկանք Ինաքլուից: Թեքվելով բլուրը, մեր առաջ պարզվեց Արագածը ոտքից գլուխ, իր բնական բոլոր վեհությամբ և նրա ստորոտին՝ Ամբերդի ավերակները. մենք հնագետներ էինք, և մեր հայացքն ամբողջովին կլանվեց ավերակներով: Օրբելին կանգ առավ, դիտեց երկար և դառնալով ինձ ասաց.

– Տեղ հասնելիս ստուգիր, եթե Վրույրը այս կետից լուսանկարած չունի այս ավերակները, խնդրիր որ լուսանկարի:

Քիչ էլ որ առաջացանք, նկատեցինք, որ բերդի պարսպի դռնից գիտարշավի անդամները դուրս եկան: Նրանք մեզ հեռադիտակով տեսել էին Ինաքլուից դուրս գալիս և այժմ ընդառաջ էին գալիս մեզ: Մենք նրանց հանդիպեցինք ձորի այս ափին, գերեզմանատան ավերակների մեջ և սրտագին համբույրներից հետո իջանք ձորը ու բարձրացանք Ամբերդ: Չնայած Օրբելու հոգնածությանը, նա առանց հանգստանալու շրջեց ու դիտեց կատարված պեղումները և երբ վերադարձանք եկեղեցի, ուր գիտարշավն էր ապրում, սեղանը ծածկված էր արդեն համեստ ընթրիքով, որի մի ծայրին ախորժելի թշշում էր ինքնաեռը: Օրբելու տրամադրությունը շատ բարձր էր: Նստելով սեղանի մոտ, նա ինձ աչքով արեց, ես հասկացա և իմ ճամպրուկի միջից կոնյակի շշերը հանելով, սեղանին դրեցի: Նա վերցնելով մի շիշը հանձնեց Տրներին՝ իր հավատարիմ օգնականուհուն, և պատվիրեց, որ պահի որպես դեղ, իսկ երկու շշերը թողնելով, ասաց.

– Տղերք, այսօր որպես բացառություն խմենք այդ կոնյակները և դա կլինի առաջինն ու վերջինը աշխատանքների ընթացքում:

Բացվեցին շշերը, երբ բոլոր բաժակները լցված էին, նա վերցրեց իր բաժակը և մի փոքրիկ ճառ ասելուց հետո ավարտեց մոտավորապես հետևյալ խոսքերով.

– Խմենք մեր ստեղծագործ այն նախնիների կենացը, որոնք իրենց նյութական ու բարոյական եռանդը սրբագործելով իրենց հանճարեղ մտքով Արագածի վեհատեսիլ փեշում շինել են այս հոյակապ կերտվածքները, որոնց ավերակներն այժմ հիացնում են դիտողներին և պատճառ հանդիսանում, որ մենք բազմազգի գիտնականներս այստեղ հավաքված ուսումնասիրում ենք այն:

Առաջինին քիչ հետո հետևեց երկրորդ բաժակը՝ նվիրված գիտարշավի հաջողություններին: Դրանով էլ վերջացավ և՛ կոնյակը, և՛ ընդհանրապես խմելը մինչև աշխատանքների վերջը:

Ահա խմելու այս դեպքը հիշեցրեց ինձ Զորյանը, որը ես նույնիսկ մոռացել էի: Բայց վերհիշելուց հետո ես զարմացած ասացի, որ կենացներ չեն խմվել: Առաջին բաժակը խմվել է հուշարձանները կառուցողների հիշատակին և երկրորդը գիտարշավի հաջողությանն է նվիրված եղել:

Բայց մատնիչներն այլ կարգի մարդիկ են, և նրանց տերերն էլ այլ կարգի: Առաջին բաժակի վրա ասված Օրբելու խոսքերի վերջին մասն աղավաղելով, բացատրելով, ավելացնելով, փոփոխելով տեղ էր հասցված որպես կենաց Պահլավունի իշխանների, որոնք Ամբերդի տերերն էին և ընդհանրապես հայ իշխանների, որոնք գիտեին իրենց ժամանակ երկիրը շենացնել: Ես մնացել էի շվարած

մատնիչի այդ աստիճան ստոր և անբարոյական վարքի վրա, բայց ինչ կարող ես պահանջել հուդայից: Այդպես են եղել նրանք բոլոր դարերում: Ես մանրամասն պատմեցի այս դեպքը Զորյանին, ինչպես, որ եղել էր: Նա կարծեմ, որ հավատաց ինձ, բայց ավելացրեց.

– Դժբախտաբար տեղ է հասցված արդեն, և չգիտեմ ինչով կվերջանա:

Այս դեպքի հետևանքներն անմիջապես երևան չեկան, տիրեց լռություն այդ առթիվ, սակայն 1937 թ. արդեն բանտերում գիտարշավի անդամների մեղադրանքների մեջ այս կետն էլ էր հիշատակվում:

Այդ հուդան մենք իմացանք ով էր. Գյուլամիրյանն էր: Մի տափակամիտ, անգույն և անընդունակ երիտասարդ, որը Երևանում համալսարանն ավարտելուց հետո, որպես ասպիրանտ ուղարկվել էր Լենինգրադ և աշխատում էր Էրմիտաժում ու այնտեղ կոմսոմոլի բջիջի քարտուղար էր: Սակայն հուդաների կյանքն էլ երկար չի տևում, նրանք պետք են տերերի համար այս կամ այն սև գործը կատարելու համար միայն: Գործը կատարվելուց հետո հետքերը մաքրվում են: Առաջին հերթին հուդաներն են մաքրվում; 1937 թ. Գյուլամիրյանն էլ ձերբակալվեց, այլևս չվերադարձավ:

Պեղումներից վերադարձանք ֆիզիկապես հոգնած, բայց հոգեպես կայտառ ու լավագույն տրամադրությամբ: Կոլեկտիվի բացառիկ լավ կազմն ու պեղումների հիանալի արդյունքները մեզ թևեր էին տալիս ապագա ընդարձակ աշխատանքների համար:

Երևանում մտքերը խաղաղվել էին: Խանջյանի մահը թվում էր առանձին դեպք՝ կապված վերնախավի ինտրիգների հետ: Այս համոզումը իմ մեջ էլ արմատացավ Ժողկոմխորհի մի նիստի տպավորության տակ, որին ես ներկա եղա և որի թողած տպավորությունն ինձ վրա շատ գոհացուցիչ և ոգևորող էր:

Ամբերդի պեղումների լավագույն արդյունքների մասին գրեցին թերթերը: Եղավ մի զեկուցում Ակադեմիայի ֆիլիալում, այդ ժամանակ Երևանում կար միայն ֆիլիալ և դրանց շնորհիվ հասարակության մեջ նկատվում էր մեծ հետաքրքրություն դեպի այդ գործը: Մի երեկոյան Օրբելին ինձ կանչեց ու հայտնեց, որ մյուս օրը երեկոյան կառավարության առաջարկությամբ Ամբերդի պեղումների մասին պետք է զեկուցում կարդա Ժողկոմխորհրդի նիստում: Քանի որ մեր կոմիսարները նման խնդիրների հետ բավականին անծանոթ են.– ավելացրեց նա ժպտալով,– խնդրում եմ վաղն առավոտյան բաց արա պեղումների բոլոր իրերն ու ջոկիր լավագույն նմուշներից բավականաչափ և տար ժողկոմխորհ ու այնտեղ փոքրիկ ցուցահանդես սարքիր, երեկոյան զեկուցումից քիչ առաջ էլ դու այնտեղ կլինես ու եկողներին կծանոթացնես հյուրերի հետ:

Հաջորդ երեկոյան ամեն ինչ պատրաստ էր: Օրբելին իրեն հատուկ ջերմությամբ կարդաց մի փայլուն զեկուցում, որի ընթացքում ես ցույց էի տալիս այն իրերը, որոնց մասին նա խոսում էր: Կոմիսարները լսում էին մեծ հետաքրքրությամբ և ձեռքից ձեռք անցկացնելով դիտում իրերը: Երբ զեկուցումը վերջացավ, դեռ երկար ժամանակ հիացմունքով դիտում էին իրերը: Ապա նախագահող Գուլոյանը հարցրեց ժողովականներին, թե արդյոք որևէ ասելիք ունե՞ն: Իմ հիշ-

ողության մեջ մնացել է հատկապես երկուսի կարճ և ոգևորված ճառերը՝ Երզնկյանի և Եղիազարյանի: Առաջինը խոսեց Երզնկյանը. նա պերճ խոսքերով դրվատեց մեր անցյալ կուլտուրան և ջերմ քաջալերական խոսքեր ուղղեց Օրբելուն, որ վերջապես այժմ իր շուրջը համախմբած թարմ ուժեր, ձեռնամուխ է եղել անցյալի ծավալուն ուսումնասիրմանը, որին կառավարությունը ամեն կերպ պատրաստ է օժանդակել: Նման տոնով էր նաև Եղիազարյանի ճառը: Դրանից հետո նախագահը հարցրեց Օրբելուն, թե որքան բյուջե են ունեցել այս տարի, ի՞նչ աղբյուրներից և որքա՞ն կարիք կլինի եկող տարվա համար: Օրբելին հիշատակեց այս տարվա գումարի քանակը, ապա ասաց, որ դա Էրմիտաժի և հայկական ֆիլիալի միջոցներից է գոյացել գրեթե հավասար չափով, և լավ կլիներ, եթե եկող տարի այդ գումարը մի քիչ ավելացվեր, մինչև 150–200 հազարի հասներ:

Երզնկյանը վեր թռնելով տեղից՝ հուզված կերպով ասաց.

– Ամոթ է մեզ, որ այդպիսի կարևոր գործի համար այդքան քիչ գումար է տրվում, այն էլ կեսը Ռուսաստանից,– ու ոգևորված ավելացրեց՝ մենք ինքներս պետք է հոգանք բոլոր ծախսերը, մենք կտանք եկող տարվա համար կես միլիոն, եթե կարող եք օգտագործել նաև մեկ միլիոն: Նրան պաշտպանեց նաև Եղիազարյանը:

Վեր կացավ ֆինանսների կոմիսար Եղիազարյանը և առարկեց, թե բյուջեն արդեն կազմված է և ուղարկված ու թե այդպիսի գումարներ անկարելի է ձեռք բերել. այդ ոգով խոսեց նաև Գուլրյանը և առաջարկեց սահմանափակվել 200 հազարով: Բայց Երզնկյանը (տաքությամբ) միջամտեց և խոստացավ կես միլիոն ապահովել եկող տարվա համար և այսպիսով վերջացավ այդ նիստը:

Բացի մեր աշխատանքների համար այդպիսի բարենպաստ վերաբերմունքից այդ նիստը ինձ վրա շատ լավ տպավորություն թողեց նաև նրանով, որ կոմիսարներն իրենց ամուր էին զգում, որ Խանջյանի մահվան դեպքն իրոք, առանձնակի դեպք էր: Այդ տպավորության տակ մենք հեռացանք նիստից լավագույն հույսերով: Սակայն մոտ ապագան շուտով ցույց տվեց, որ այդ հույսերը սին էին, և որ կոմիսարներն էլ մեզ նման մահկանացուների պես անտեղյակ էին, հավանաբար, նյութվող այն արհավիրքին, որը պիտի ոչնչացներ առաջին հերթին հենց նրանց:

Այս բոլորը տեղի էր ունենում 1936 թվի վերջերին: Շեմքի վրա էր 1937 թիվը՝ մահվան գերանդին ուսին, քանի՞ հոգի կար արդյոք, որ նրա մոտենալը զգում էր և նրա քայլերի ձայնը լսում: Երևանում գուցե ոչ ոք կամ մեկ-երկու հոգի միայն:

Խանջյանի մահից հետո մի քանի ամիս տևող խաղաղությունը խաբուսիկ էր, դա մեծ փոթորիկից առաջ եղող չարագուշակ խաղաղություն էր: Եկավ 1937 թիվը և նրա հետ էլ ահռելի, դաժան և աննախընթաց սոսկումը: Սկսվեցին մասսայական ձերբակալությունները: Այս սոսկումը համատարած էր արդեն և նման չէր իր նախորդներին: Նա սրբում տանում էր հասարակության բոլոր խավերին՝ գյուղացի ու քաղաքացի, կին թե տղամարդ, անկուսակցական թե կուսակցական, անգամ 12-15 տարեկան պատանիներ բանտերն էին լցվում անխնա կերպով: Աղետը համամիութենական էր և համաժողովրդական: Նա ավելի դաժան ու մեծ

էր, քան 1917 թ. հոկտեմբերը: Սարսափը տիրել էր բոլորին, մտավորականությունն առանձնապես ոչ մի հույս չուներ վաղվա օրը տեսնելու, մարդիկ ամբողջ գիշերը նստած սպասում էին կամ առանց հանվելու մրափում. ոչ ոք անկողին չէր մտնում: Ծայր առավ ինքնասպանությունների շարանը կառավարական ու կուսակցական պաշտոնյաների մեջ: Սարսափը ճնշել, ոչնչացրել էր մարդկանց: Փողոցներում շրջում էին մեռելների նման, հուսաբեկ, գունաթափ, անխոս: Աշխատանքի գնալիս հույս չունեին, թե տուն կվերադառնան, տանը մնալով հույս չունեին, թե գիշերը պիտի լուսացնեն: Մտավորականությունը դարձել էր բարոյալքված, կամազուրկ, անճար ոչխարի հոտ՝ սպանդանոցում խռնված կացնի իր հերթին սպասող: Ոչ ոք փրկության հույս չուներ և ոչ ոք խույս տալու մասին չէր մտածում: Ու՞ր խույս տալ, ու՞ր փախչել, մեր երկրում դա անհնար է, ամեն մարդու գլխին մի տասնյակ լրտեսներ կային, սահմանն անցնելու մասին ոչ ոք չէր էլ մտածում, և անհնար էր, և ամբողջ ազգ ու բարեկամների կորստյան պատճառ: Կքված ու բարոյապես անդամալույծ եղած մարդիկ մի բան էին երազում. գոնե շուտ տանեին, որ թե իրենք, թե իրենց հարազատներն ազատվեն սպասողական այդ տանջանքից: «Ահն ավելի դժվար է, քան մահը» – բազմադարյան ժողովրդական իմաստության բովանդակությունն այժմ ըմբռնելի էր դարձել բոլորի համար:

Առավոտյան վեր կենալով ստուգում էին՝ հարևաններից ու՞մ են տարել. հիմնարկ գնալով այնտեղ էին իմանում՝ աշխատակիցներից ու՞մ են այս գիշեր տարել: Տանում էին ցերեկները, բայց մանավանդ գիշերները, որ դռանը մեքենա էր կանգ առնում, ամբողջ տունը սարսափով էր բռնվում, ու՞մ բնակարանը պիտի մտնեին արդյոք, ու՞մ տունը պիտի քանդվի արդյոք: Եվ քանդվում էին տներն իսկապես, ում ձերբակալում էին, տնային բոլոր իրերն էլ գրավում էին, և ամբողջ ընտանիքը փողոց էր շպրտվում անմիջապես: Բախտավոր էին նրանք, որոնց կանանց չէին տանում, իսկ ում կնոջն էլ տանում էին, մանկահասակ երեխաները օրերով մնում էին փողոցում և ոչ ոք չէր համարձակվում նրանց ծվարել, ամեն մի օգնություն այդ թշվառներին պետական հանցանք էր համարվում, և մարդիկ արյունոտ սրտով փախչում էին այդ թշվառ երեխաներից:

Սարսափելի լուրեր էին թափանցում բանտերի պարիսպներից դուրս: Այնտեղ ծեծում են, տանջում, կտտում բանտարկյալներին: Միջնադարի բոլոր հրեշային տանջանքները վերականգնվել են: Այդ լուրերը հաստատվում էին քննիչներից 2–3-ի ինքնասպանություններով:

Տարածվեց Տեր-Գաբրիելյանի և Երզնկյանի բրածեծ սպանությունների լուրը հենց իր՝ Մուղդուսու սենյակում: Մարդիկ խուսափում էին իրար հանդիպել՝ նոր սարսափների լուրեր չստանալու համար:

Դատարկվեցին կառավարական և կուսակցական բարձր հիմնարկները: Կանգուն էր միայն ամենազոր Չեկան և հնձում էր համարձակ, անամոթ, անպատկառ լկտիությամբ, գիշեր ու ցերեկ՝ ոտնատակ տալով ամեն մի օրենք ու արդարություն:

Տարան նախ դաշնակցականների մնացորդներին, որոնք մի քանի անգամ բանտեր ու աքսորներ նստելուց հետո դեռ կենդանի էին մնացել, ապա հին զինվորականներին, տրոցկիստներին, հին բոլշևիկներին, հետո արդեն անխտիր՝ բոլորին: Կենտրոնի հրահանգը սարսափելի էր, ըստ երևույթին, բայց դրան ավելանում էր տեղական պաշտոնյաների փութաջանությունն՝ իրենց կաշին փրկելու համար պլանները գերակատարելու ճիգը: Դրան միացավ և տասնամյակներով բարոյալքված հասարակության տականքների մատնությունները՝ անձնական հաշիվները մաքրելու, պաշտոն ու դիրք ձեռք բերելու համար: Ամեն մատնություն ճիշտ էր համարվում, ամեն մի զրպարտիչ թղթի կտոր կյանքեր էր հնձում: Տաճկաստանում եթե մահմեդականը քրիստոնյայի համար ասում էր, որ «կրոնս է հայհոյել» արդեն հերիք էր, որ նա անդատ, անդատաստան կորչի: Այժմ ամեն մեկի համար բավական էր, որ մեկն ասեր, թե հակախորհրդային է, և նա արդեն կորած էր: Ամեն կուսակցական և անկուսակցական, որ մատնություններ չէր անում, արդեն անբարեհույս էր, մատնություններ անելուց հետո էլ իրեն՝ մատնիչին էին տանում, որովհետև նրան էլ մատնող էր գտնվում:

Սարսափը տնական էր, ամիսներով, տարիներով, Չեկան չէր հասցնում. չեկիստները շաբաթներով աշխատում էին անքուն: Բանտերը ձկների տակառների նման լցվել էին, և տեղ չկար: Գնացքները հյուսիս էին տանում բանտարկյալներին, և բանտերը միշտ լիքն էին: Թոխմախան գյուլի հետևը, Դալմայի առապարները գիշերները լուսավորվում էին հրացաններից արձակված բոցերով, բայց էլի բանտերում տեղ չկար: Հունձն առատ էր սաստիկ, բայց հնձվորները քիչ էին, և ամբարները՝ փոքր:

Հատկապես դաժան էր վերաբերմունքը դեպի մտավորականությունը, վերանայում էին հրատարակված բոլոր գրքերը և եթե որևէ միտք կարելի էր լինում պաշտոնական հասկացողություններից նաև այլ կերպ բացատրել, արդեն հանցանքը պատրաստ էր, և հեղինակը՝ կորած: Վերադիտում էին նկարիչների բոլոր աշխատությունները և սխալներ գտնում, ու նկարիչը կորած էր: Պետհրատի բոլոր նկարիչները ձերբակալվեցին, նրանց նկարած Մարքսի մորուքի մազերի ոլորների մեջ խոշորացույցի միջոցով հայտնաբերեցին «Տ» տառի ձևը և Ալթունյանն ու մյուսները կորան: Ճարտարապետների շինած տների վրայի քանդակների մեջ, եթե խաղողի ու նռան կամ այլ հայկական քանդակի հետք էին գտնում, կառույցը կորչում էր: Սարսափելի բծախնդրությունը գերազանցեց բյուզանդական վարպետների սխոլիստիցիզմին: Ով մի անգամ արտասահման էր եղել, անխոս կորչում էր, իսկ այնտեղից եկածների մասին մտածելն ավելորդ էր: Ով նամակագրություն էր ունեցել արտասահմանի իր հարազատների հետ՝ լրտես էր, ով արտասահմանից եկած որևէ անձի հետ շփում էր ունեցել, նա նույնպես լրտես էր: Կաթողիկոսի ընտրություններին՝ 1935 թ., Չոպանյանն իր կամքից անկախ դառավ մի քանի տասնյակ հայ մտավորականների գերեզմանափորը: Այնքան հոլովվեց նրա անունը ժողովներում և թերթերում, որ լուրն իրեն էլ հասավ և սարսափած իր ակամա գերեզմանափորի վիճակից, նա բողոք-նամակ ուղղեց ղեկավարին: Դժբախտ մարդ, ազատվելով 1914 թ. իր հայրենի պոլսահայ

մտավորականության բնաջնջումից և մինչև այժմ էլ ողբալով այն, նա ինքը դառնում էր Երևանի մտավորականության բնաջնջման առիթ:

Գրողների միությունը դատարկվեց, այս սարսափի մեջ իրենց ավյունը չկորցրած հազվագյուտ մարդիկ իրար պատահելով հարցնում էին.

– Բարեկամ կարծեմ դու բնակարանի կարիք ունես:

– Այո,– պատասխանում էր մյուսը միամտորեն:

Մի ամբողջ շենք է տրվում վարձով Աբովյան № 2, գրողների տուն, շտապիր: Եվ այս անեկդոտը իր նմանների հետ ժամանակի ոգին էր: Չարենցը կատաղած էր, ինչու՞ իրեն չեն ձերբակալում, մի՞թե ինքն արժանի չէ այդ պատվին, մի՞թե լրտեսի համբավ պիտի ստանա: Մի քիչ կոնծելով գնում է ուղղակի Մուղդուսու մոտ և առաջարկում, որ իրեն ձերբակալի. զոռով դուրս է անում, պատասխանելով, որ երբ պետք լինի կձերբակալի: Սպասում է մի քանի օր Չարենցը, տեսնում է, որ ուշացնում են, սկսում է խմել և գրողների տանն ու փողոցում «խուլիգանություններ» անել, բարձրաձայն դժգոհում է ձերբակալությունների դեմ, ողբում կորած ընկերներին՝ Բակունցին և ուրիշներին: Այս անգամ ինքը՝ Մուղդուսին է կանչում և սպառնում, թե կձերբակալի, եթե չթողնի այդ «խուլիգանությունները».

– Բռնիր, ձերբակալիր,– գոչում է նա փրփրած,– հենց դրա համար եմ եկել քեզ մոտ, մեծ պատիվ կանես դրանով, ինչ կա ավելի մեծ պատիվ ինձ համար, քան հայ մեծագույն հեղափոխական գրող Նալբանդյանի նման բանտում մեռնել:

Բայց կրկին չեն ձերբակալում: Չարենցը հուսահատ Ծաղկաձոր է տեղափոխվում ընտանիքով, բայց երկար մնալ չի կարողանում. թողած ընտանիքը գալիս է Երևան: Մի քանի օր անց կնոջից լուր է ստանում, որ իրենց բնակարանից դուրս են արել: Չարենցը սլանում է նորից Ծաղկաձոր, տեսնում է ընտանիքին տեղափոխել են հյուրանոցի մի նեղ սենյակ, իսկ իր վարձած բնակարանը տվել մի ադրբեջանցի պատասխանատու աշխատակցի. բաժակը լցվում է: Չարենցը մտնում է ճաշարան, լավ կոնծում, ապա դուրս գալով այնտեղից ճարում է մի մալականի ֆուրգոն և վարձում մինչև Երևան: Մինչև ֆուրգոնի տերը ձիերը կլծի, գտնում է նաև նվագածուների մի խումբ և նրանց էլ է վարձում մինչև Ախտա, ապա գալիս է հյուրանոց և ստիպում կնոջն ու երեխաներին ֆուրգոն նստել, իսկ ինքը ջարդում է ամանեղենն ու իրերը և լացող կնոջն ու երեխաներին զոռով ֆուրգոն նստեցնում: Ֆուրգոնի վրա տեղավորում է նաև սազանդարներին և հրամայում, որ նվագեն ու այսպես քշել է տալիս Ծաղկաձորի գլխավոր փողոցով: Երբ հասնում է ամբոխի կուտակված տեղը, կանգնում է ֆուրգոնի մեջ և բղավում.

– Իմացիր, հայ ժողովուրդ, ես Չարենցն եմ, քո բանաստեղծը, իմ ընտանիքը դուրս են շպրտել բնակարանից, այն տվել են մի թուրքի, ես փողոցում եմ մնացել:

Այս կարգի բացականչություններով, նվագով ու աղմուկով ֆուրգոնը դուրս է գալիս Ծաղկաձորից: Ծաղկաձորի ղեկավարները գործի են անցնում սարսափած, անմիջապես կապվում են Երևանի Չեկայի հետ և եղելությունը հայտնում: Հազիվ Չարենցի ֆուրգոնը մի քանի կմ հեռացել էր Ծաղկաձորից, Երևանից

սլացող Չեկայի մեքենան հասնում է բանաստեղծին, հափշտակում նրան և թռցնում Երևան: Չարենցը հասավ իր նպատակին, նա բանտում է, սակայն քիչ հետո կնոջն էլ են ձերբակալում, բնակարանը գրավում, իսկ երեխաներին փողոց նետում:

Չարենցի հոգեվիճակը արտահայտությունն էր լավագույն մտավորականության վիճակի: Մարդիկ ուզում էին, որ իրենց էլ ձերբակալեին, արդեն ազատ մնալը նրանց համար բարոյական անկման համազոր էր համարվում: Չարենցը բանտ գնաց երկրորդ և վերջին անգամ:

Նրա մահվան լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքում որպես մղձավանջ: Բանտի մեջ նույն օրն արդեն բոլոր կամերաներում գիտեին այդ մասին բանտարկյալներին հատուկ միջոցներով: Այդ օրը բոլոր կամերաներում տեղի ունեցան սգո հուշ-երեկոներ, ուր նրա մասին հիշողություններ էին պատմվում, իսկ նրա գրչի ընկեր բանտարկյալները կարդում էին այդ օրն իսկ գրված բանաստեղծություններ՝ նվիրված Չարենցին:

Դատարկվեց նաև համալսարանը: Ձերբակալվեցին 18 հոգի, միայն պրոֆեսորներ և դասախոսներ, ուսանողությունը թափառում էր փողոցներում: Պրոֆեսորների փոխարեն դասախոսներ սկսեցին նշանակել ամեն պատահած կոմունիստի, և գիտության այդ տաճարը դարձավ կատարյալ համբականոց և շարունակում էր մնալ այդպիսին: Տասնամյակներով հավաքված անվանի գիտնականները ոճրագործ ձեռքի մի հարվածով ոչնչացվում էին: Ձերբակալված գիտնականների և գրողների գործերը հանվում էին շրջանառությունից և գրադարաններից: Ամեն օր գրադարանները ստանում էին հեղինակների ցուցակներ, որոնց գրքերը պետք է հանվեին: Գրադարաններում հատուկ աշխատակիցներ առանձնացվեցին այդ գործի համար: Հավաքված գրքերը տարվում էին և հատուկ ձևով այրվում: Ձերբակալվածների տներում կատարվում էր մի քանի ժամ տևող խուզարկություն և տարվում էին տարիների վաստակ ձեռագրերն ու ոչնչացվում: Հայ մտքի արգասիքը երբեք այդպիսի բարբարոսություն չէր տեսել իր 1500-ամյա գոյության ընթացքում: Անվանի հայագետներն ունեին տասնամյակների աշխատանքի արդյունք հանդիսացող հսկայական ձեռագիր հատորներ, որոնք չէին հրատարակվում: Այժմ իրենց հեղինակների հետ միասին ոչնչացվում էին այդ թանկարժեք հատորները: Բարեբախտ գտնվեց այդ բոլորի մեջ Ամառյանը միայն, շնորհիվ իր կնոջ բացառիկ հերոսությանը: Ամառյանի ձերբակալումից հետո կնոջը բնակարանից դուրս են շպրտում անմիջապես: Ձեռագրերը, որովհետև շատ են լինում, կնքում են հեղինակի աշխատասենյակում: Հերոս կինը այդ նկատում է և գիշերը գալիս ու պատուհանի ապակին հանում, մտնում է այդ սենյակը և դուրս է տանում մի քանի անգամով, և երկաթե սնդուկի մեջ լցրած թաղում մի հեռավոր ազգականի պարտեզում: Երբ 1940 թվին որպես հրաշք Ամառյանին ազատում են բանտից, երկուս ու կես տարի նստելուց հետո, նա փրկված է տեսնում իր ձեռագրերը: Հայ ժողովուրդը Ամառյանի ազատումով գտնում է իր մեծագույն գիտնականին, իսկ նրա հերոս կնոջ ջանքերով՝ Ամառյանի տասնամյակների հոյակապ վաստակները: Այսուհետև Սոֆիայի անունը

միացած է Աճառյանի վաստակին և հայ ժողովուրդը նույնքան երախտապարտ է Սոֆիկին, որքան Աճառյանին:

Աճառյանի ձերբակալությունը հատուկ նշանակություն ունեցավ դեռ ազատ մնացած մտավորականության համար: Բոլորին թվում էր, որ եթե որևէ մեկը հին գիտնականներից զերծ կմնա այդ արհավիրքից, դա Աճառյանն է լինելու: Այդ կարծիքը կազմվում էր հետևյալ հիմքերի վրա. 1. Աճառյանը համաշխարհային հռչակ ունեցող գիտնական է: 2. 65-տարեկանի մոտ ծերունի է արդեն, մի ոտքը գերեզմանին: 3. Աճառյանն իր բնավորության տարօրինակությամբ և քաղաքական գրեթե տգիտությամբ ու դրա հետ նաև բացարձակ պասսիվությամբ, որը գիտե օրական 16 ժամ իր տանը նստած կարդալ ու գրել՝ հեռու հասարակությունից, գրեթե մի ճգնավոր, որը չգիտե անգամ թատրոնի և կինոյի ճամփան, անշուշտ չի մտցվի ոչնչացվողների ցուցակում: Սակայն այս բոլոր հաշիվները սխալ դուրս եկան, որովհետև ձերբակալությունների բուն նպատակը ոչ ոք չգիտեր: Դրա համար էլ, երբ նրան տարան, ամեն ոք զգաց արհավիրքի մեծությունը: Ամեն ոք զգաց, որ այլևս ոչ ոքի համար փրկություն չկա, որ վաստակ, մեծություն, տարիք, պասսիվություն և առհասարակ ոչ մի առանձնահատկություն հաշվի չի առնվում: Այլևս պարզվեց, որ նպատակը ամեն ինչի ոչնչացումն է, անխնա, անսքող, հրեշային: Լսում էինք, որ բոլոր հանրապետություններում նույն բանը կատարվում է, սակայն համոզված էինք, որ Հայաստանում կգերազանցեին բոլորին, և դա ճիշտ էր: Դա տասնամյակների դառը փորձի հետևանք էր: Հայ կոմունիստները սև գործեր կատարելու մեջ ամենաեռանդունն էին միշտ, նորադարձ կաթոլիկի սոսկալի մի եռանդ, որ միշտ էլ շատ թանկ էր նստում հայ ժողովրդի համար: Հանգուցյալ Կանայանը, որ բախտ ունեցավ 1935 թվականին բնական մահով մեռնել, զերծ մնալ այդ արհավիրքից, մի դիպուկ դիպված ուներ, որ հաճախ էր կրկնում, նա ասում էր. «Բոլշևիկները հրեշ են, իսկ հայ բոլշևիկների համար մարդկային միտքն անզոր է անուն գտնելուն»: Ապագան ցույց տվեց, որ իրոք այդպես էր, որ խեղճ հայ ժողովուրդը այդ աղետին ամենից շատ զոհեր տվեց:

Ես աշխատում էի Հնությունների պահպանության կոմիտեում: Հիմնականում կոմիտեն աշխատանքների տեսական մասով մտնում էր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի մեջ, այդ ինստիտուտի պատմության սեկցիայում էինք մեր զեկուցումները կարդում և նրա փաստական օրգանում մեր փոքրիկ աշխատությունները տպագրում: Այդ դժբախտ ինստիտուտն ամբողջովին դատարկվեց գրեթե, նրա շատ տարիների դիրեկտոր Գյուլիքխևյանից հետո ամեն ամիս մի նոր դիրեկտոր էր նշանակվում, որը սակայն դեռ պաշտոնին չծանոթացած ձերբակալվում էր: Մի վեց ամսվա մեջ նույն թվով դիրեկտորներ եկան և բանտ գնացին: Ամեն աշխատանք կանգ էր առել:

Այս սոսկումի տարին կոմիտեի ծրագրով իմ գլխավորած հնագիտական գիտարշավը պիտի մեկներ Զանգեզուր ու երբ ամեն ինչ պատրաստելուց հետո մեկնեցինք Երևանից, թվաց թե դուրս եկանք մղձավանջից: Բնության ծոցում, սարերի ու անտառների մեջ, հին բերդերի, քարվանսարների ու վանքերի ավեր-

ակների մեջ, զբաղված մեր սիրած աշխատանքով, կտրված քաղաքից, թերթերից ու մարդկանցից, մենք հանգստանում էինք բարոյապես, և եթե մեր նյութական միջոցները խիստ սահմանափակ չլինեին, մենք դեռ երկար ժամանակ չէինք վերադառնա Երևան: Բայց ստիպված էինք վերադառնալ:

Երևան վերադարձա հոկտեմբերի վերջերին: Ձերբակալությունները նույն թափով շարունակվում էին և մտավորականության մեծ մասն արդեն տարված էր: Երևանում մնալը կատարյալ տանջանք էր: Աշնանը ես մի քանի կարճատև շրջագայություններ ևս կատարեցի դեպի մոտակա շրջանները:

Ավագ գիտաշխատողները տարեկան 2 ամսվա արձակուրդից էին օգտվում: Ես ոչ մի տարի ամառվա ամիսներին արձակուրդ չէի վերցնում և երբեք որևէ հանգստի տուն, սանատորիա կամ պարզապես ամառանոց չէի գնում: Իմ մասնագիտության ու աշխատանքի համար այդ բանը ևս անհարմար և անօգուտ էր համարվում, մանավանդ առողջությունից դժգոհելու առիթ չունեի: Դրա համար 1932 թվից սկսած ես սովորություն էի դարձրել արձակուրդ վերցնել ձմեռվա ամիսներին: Այդ արձակուրդիս ժամանակը ես անց էի կացնում մասամբ Մոսկվայում և գլխավորապես Լենինգրադում, ուր թաղված գրադարաններում ու սքանչելի Էրմիտաժում ազատ կերպով պարապում էի: Այս տարի ևս արձակուրդ վերցրի և դեկտեմբերի կեսերին մեկնեցի Ռուսաստան: Մոսկվայում իջա իմ համագյուղացի և մանկության ընկեր Հմայակի տանը: Մոսկվայում այս տարի մնալու բոլորովին միտք չունեի, սակայն Հմայակն ամառը կնոջ հետ եկել էր Երևան մի ամսով, որը և խոսք էր առել ինձանից այցելելու իրեն իմ ճամփորդության ժամանակ:

Հմայակը ճարտարապետ էր և քաղաքի վերակառուցման գծով էր աշխատում ու լավ ծանոթ էր անցուդարձին: Նրանից իմացա, որ սարսափելի ձերբակալություններ այդտեղ ևս մեծ չափերով են կատարվում: Ուրեմն ամեն տեղ նույն վիճակը և նույն հուսահատությունը:

Հինգ օր Մոսկվայում մնալուց հետո մեկնեցի Լենինգրադ՝ խոստանալով Հմայակին, որ վերադարձիս էլի մի քանի օրով կմնամ իր մոտ: Լենինգրադ հասա. այստեղ նույն դրությունն էր, որովհետև ծանոթներ և ընկերներ շատ ունեի, դրա համար ավելի հաճախ էի լսում ձերբակալությունների մասին: Մտավորականությունը սարսափահար և հուսալքված էր, ոչ ոքի միտքը աշխատանքով չէր զբաղված, ամեն ոք սպասողական վիճակի մեջ էր: Գնալով ձերբակալությունները շատանում էին: 1938 թ. հունվարի վերջերին ես ուզում էի դեռ արձակուրդս չվերջացած վերադառնալ, որովհետև տիրող տրամադրության ազդեցության տակ ես էլ չէի կարողանում արդյունավետ պարապել, սակայն Օրբելին առաջարկեց սպասել մի 10-12 օր: Այդ տարի տոնվում էր վրացի մեծագույն գրող Ռուսթավելու 700-ամյակը: Լենինգրադում տոնակատարության ոգին Օրբելին էր և կենտրոնը՝ Էրմիտաժը: Էրմիտաժում կազմակերպված էր սքանչելի ցուցահանդես՝ «Ռուսթավելին և նրա էպոխան» թեմայով, որի աշխատանքներին ես էլ էի մի քիչ մասնակցել: Փետրվարի 6-ին ցուցահանդեսը պիտի բացվեր հասարակության համար և նույն օրը՝ երեկոյան, տեղի պիտի ունենար հանդիսավոր նիստ, ուր Օրբելին պիտի զեկուցում կարդար Ռուսթավելու մասին: Այդ օրը

պիտի տպարանից ստացվեր Ռուսթավելուն և նրա էպոխային նվիրված հատորը: Օրբելին ցանկացավ, որ այդ օրը ես ներկա լինեմ և հատորն էլ հետս Երևան բերեմ: Մնացի: Երանի թե մնացած չլինեի, որովհետև մորմոքող սրտով պիտի վերադառնայի:

Ընդհանուր վիճատության հետ Լենինգրադում ես ունեցել էի մի ոգևորող հանգամանք, որը կապված էր վաղուց ի վեր փայփայած, ինձ համար գրեթե կյանքի նպատակ դարձած աշխատանքի իրականացման հույսի հետ: Դա հետևյալն էր. գիտությանը վաղուց հայտնի էր, որ հին ժողովուրդների կուլտուրայի ուսումնասիրության համար հսկայական և առաջնակարգ նյութեր են պարունակում այդ ժողովուրդներից մնացած վիմական արձանագրությունները: Եվրոպական գիտությունը քրտնաջան աշխատանքով հավաքել և հսկայական ժողվածուներով հրատարակել էր հունարեն, լատինական, արաբական և այլ արձանագրություններ: Հայկական արձանագրություններն իրենց դժբախտ ժողովրդի օրին ենթարկվելով, տարեցտարի կորչում, ոչնչանում էին՝ սպասելով իրենց գիտության նորագույն ձևերով հավաքողներին և հրատարակությանը: Հայկական արձանագրությունների թիվը մոտավոր հաշիվներով 30–40 հազարի էր հասնում: Այդ հսկայական նյութից չնչին բեկորներ էին միայն հավաքված ու հրատարակված մի քանի վարդապետների ու ճանապարհորդների կողմից, այն էլ մեծ սխալներով և գիտական օգտագործման համար այժմ գրեթե անպետք մեթոդներով: Դեռ 1890-ական թվականներին ակադեմիկոս Մառը ուշք դարձրեց այդ առաջնակարգ նյութի վրա և իր մի շարք ուսումնասիրություններով հիմնված այդ արձանագրությունների վրա ապացուցեց դրանց առաջնակարգ նշանակությունը ինչպես հայ, նույնպես և հարևան ժողովուրդների պատմության ու կուլտուրայի ուսումնասիրության համար: Միաժամանակ իր հրատարակած արձանագրություններով նա ապացուցեց, թե նախկին հատուկենտ հրատարակությունները որքան սխալաշատ են և անպետք գիտական օգտագործման համար: Այնուհետև Մառը տասնամյակների ընթացքում պրոպագանդա էր անում այդ գործը կազմակերպելու համար: Մառի աշակերտները ևս լծվեցին այդ աշխատանքին: Եվ համաշխարհային պատերազմից առաջ Լենինգրադում Մառի շկոլան ինքն ու իր աշակերտները, հատկապես Օրբելին, արդեն մշակել էին հատուկ մեթոդներ՝ արձանագրություններ հավաքելու ու հրատարակելու համար և ձուլել հատուկ տառեր: Սակայն 1914 թվի պատերազմը և նրան հետևող իրադարձությունները խափանեցին այդ մեծագույն ձեռնարկը. դրան ավելացավ նաև բնական աղետը՝ 1926 թ. Նևան խիստ բարձրացավ և դուրս գալով իր ափերից, ահագին ավերածություններ կատարեց Լենինգրադում: Մառի և Օրբելու մշակած այդ տառերը գտնվում էին Ակադեմիայի տպարանում: Հեղեղած Նևայի ջրերը լցվում են այդ տպարանը և ոչնչացնում են այս տառերը: Հեղեղից հետո հավաքած մնացորդները շատ փոքրաքանակ ու պակասավոր են: «Աշխարհի որ անկյունում աղետ լինի, հային անպայման կկպչի»,– ասում է առածը և ճիշտ է:

Այժմ ահա Օրբելին հայկական արձանագրության հավաքման և գիտական հրատարակման հարցը նորից վեր էր հանել Ակադեմիայում, որը և սկզբունքորեն բավարար որոշում էր կայացրել. այն է՝ հավաքել և հրատարակել հայկական արձանագրությունները, այդ գործի բոլոր ծախսերը հոգալ Ակադեմիայի միջոցներից, գործի ընդհանուր ղեկավար և խմբագիր նշանակել Օրբելուն: Ակադեմիայի այն որոշումը հասնելով Կովկաս՝ Վրաստան ու Ադրբեջան, դիմեցին Օրբելուն, որ նա հանձն առնի իրենց երկրներում ևս գտնված արձանագրությունների հավաքման ու հրատարակման ղեկավարությունը: Այսպիսով ստեղծվում էր գիտական մի կարևոր աշխատանք՝ կովկասյան ծավալով: Օրբելին մտածում էր գարնանը Երևանում կամ Թբիլիսիում խորհրդակցություն հրավիրել: Մի օր ինձ հրավիրելով իր մոտ, լավագույն տրամադրությամբ շնորհավորեց գործի սկզբի այս հաջողությունը և Հայաստանում գործը կազմակերպելու աշխատանքները ինձ հանձնարարելով, ասաց.

– Նու, Սեդրակ, գործդ դժվար է, բայց պիտի կատարես, որովհետև սիրում ես, ամեն աշուն երկու հատոր ձեռագիր պիտի բերես Լենինգրադ և ձմեռն էլ այստեղ մնալով մեկը տպագրված գարնանը պիտի տանես, մյուսն էլ՝ մինչև աշուն պատրաստ կլինի:

Ինձ երջանիկ էի զգում այս հոյակապ մեծարժեք գործին նվիրվելով: Բայց հայ ժողովրդի և նրա կուլտուրայի ճակատագիրը չար աստծու ձեռքում է գտնվում: Այս ձեռնարկությունը ևս պիտի խափանվեր 1937 թվի արհավիրքների մեջ: Դեռ ավելին, այն մի քանի հազար պատրաստի արձանագրությունները, որոնք հավաքված էին Մառի՝ Հայաստանում աշխատող աշակերտների կողմից, նույնպես պիտի ոչնչանային:

...Փետրվարի 6-ին տեղի ունեցավ Ռուսթավելու ցուցահանդեսի բացումը: Երեկոյան տեղի ունեցավ հանդիսավոր նիստը, ու Օրբելին փայլուն զեկուցում կարդաց և լույս տեսավ ժողովածուն: Ես այլևս անելիք չունեի և արդեն մտածում էի 7-ին մեկնել: Մի խումբ հայ և ռուս հնագետներ՝ Էրմիտաժի աշխատակիցներ, որոնց հետ տարիներով ես աշխատել էի թե՛ Հայաստանում և թե՛ Էրմիտաժում, որոշել էին այդ երեկո մի փոքրիկ խնջույք սարքել իմ մեկնելու առթիվ, ու մենք հանդիսավոր նիստից ուղղակի գնացինք խնջույքի: Մեր համեստ խնջույքը տևեց մինչև գիշերվա ժամը 2-ը: Խնջույքից տուն վերադարձա: Ես ապրում էի մորաքրոջս մոտ, մի բազմանդամ ընտանիք, որը վաղուց ի վեր բնակվում էր Լենինգրադում: Ես ծանր սրտով էի տուն գնում, որովհետև երեք օր առաջ ձերբակալեցին մորաքրոջս տղային, մի վառվռուն երիտասարդ, որն ավարտել էր ճանապարհաշինարարական տեխնիկումը և աշակերտում էր դիսպետչերի պաշտոնով. մորաքրոջս տունը սգի մեջ էր, ես տուն հասա գիշերվա ժամը 3-ի մոտ, բոլորը դեռ արթուն էին, պատրաստվում էինք քնելու, երբ դռան զանգը հնչեց: Խեղճ ընտանիքի անդամների սրտով դող անցավ, դուռը բացեցին կրկին չարագուշակ Չեկայի տարազներով մարդիկ. երեք հոգի եկել էին այժմ էլ ընտանիքի հորը տանելու՝ մորաքրոջս ամուսնուն՝ 60-ի մոտ մի մարդու, որը տասնյակ տարիներ աշխատում էր հաշվետարի պաշտոնով: Խուզարկությունը և այլ ձևականությունները տևեցին մինչև ժամը 6-ը: Դեռ չչորացած արտասուքները կրկնապ-

ատկվեցին, սուգը տիրեց բոլորին, և մենք այլևս քնելու մասին անգամ չմտածեցինք:

Բաժակը լցվեց, աշխատելն անգամ դարձավ անհնարին: Ես տոմս վերցրել էի ամսի 7-ի երեկոյան մեկնելու համար: Գնացի Էրմիտաժ ընկերներիս մնաս բարով ասելու և վերջին անգամ Օրբելուն տեսնելու համար: Էրմիտաժում ինձ սպասում էր մեծագույն հուսահատությունը, բոլոր աշխատակիցները սգի մեջ էին: Անցյալ գիշեր տարել էին Էրմիտաժի աշխատակիցներից 7–8 հոգի, որոնց մեջ 3–4-ը հայեր՝ երկուսը վերջիններիցս նրանք, որոնք ինձ հետ անցյալ գիշերը խնջույքի էին, մեկը հենց տան տերը Լ. Գ. –ն: Մեր հեռանալուց մի կես ժամ հետո հայտնվել էին չեկիստները և տարել մեր հյուրընկալին:

Էրմիտաժում այդ օրը մարդիկ քայլում էին հուսահատ, շվարած, խոսում էին շշուկով ու սարսափահար: Օրբելին փակվել էր իր առանձնասենյակում և ոչ ոքի չէր ընդունում: Նա ինձ ընդունեց. նստած էր բազկաթոռին՝ կռացած դեպի առաջ, ձեռքերն իրար վրա դրած, հանկարծակի վշտից քարացածի նման: Նրա խրոխտ, անզուսպ և թափանցիկ հայացքը պղտորվել էր ծանր հարվածի տակ: Նա կքվել էր, ընկճվել և ծերացել մի քանի տարով: Նրա շեշտակի և արագ շարժումները բոլորովին կորել էին և դարձել ինչ-որ մեքենայական ու անորոշ: Մի քանի րոպե մենք լուռ նայեցինք իրար: Ես հուզմունքից մոռացա նույիսկ բարևել, մինչդեռ նրա հետ ըստ ռուսական սովորության միշտ ձեռք էի սեղմում: Չգիտեինք ինչից սկսել: Մենք նման էինք սիրածի դիակի վրա հանդիպած մարդկանց, որոնց լեզուն փակվում է, որոնց ներքին ձայնը հրամայում է լռել և չխանգարել րոպեի վեհությունը: Իմ մտքով ակամայից անցավ Օրբելին 1932 թ.: Այդ ժամանակ էլ Էրմիտաժի աշխատակիցներից մի քանի հոգի ձերբակալվեցին Կիրովի սպանության առիթով: Պետք էր այդ օրերին տեսնել Օրբելուն: Նա վրդովված ու գերագույն եռանդով օրերով ոտնատակ տվեց պաշտոնատները, անձամբ դիմում էր ղեկավարներին ու ամեն տեղ ապացուցում և պաշտպանում ձերբակալվածների անմեղությունը: Երկու ամսվա անդուլ և հանդուգն աշխատանքից հետո, անձնական երաշխավորությամբ, ազատեց իր աշխատակիցներին, որոնք իհարկե անմեղ էին, իսկ հազարավոր անմեղներ քշվեցին և ոչնչացվեցին:

Այժմ էլ Օրբելին գիտեր, որ ձերբակալվածներն անմեղ են, այժմ էլ նա գուցե զանազան ծրագրեր էր խորհում նրանց փրկության համար, բայց նրա ամբողջ կաթվածահար արտաքինը և նրա վրա արտահայտվող հոգեկան աշխարհը արտահայտում էր մի ցավալի գիտակցության կնիք: Նրա ամբողջ էությունն ասում էր, այժմ բոլորովին տարբեր ժամանակներ են և ոչ ոք ոչինչ անել չի կարող մահվան ճանկերից ազատելու համար ձերբակալվածներին:

Օրբելին ուներ ջերմ, կրակոտ սիրտ, ում նա սիրեց, անվերադարձ էր և պատրաստ կյանքն անգամ զոհելու համար: Այժմ նրա ամենասիրելի աշակերտներն էին դեպի մահ տարվում, և նա ներքուստ զգում էր իր անզորությունը՝ նրանց փրկելու համար: Այդ անզոր ցավն էր փշրել նրան հոգեպես և ֆիզիկապես:

Այժմ նա նստած էր կքված վշտի և իր անզորության կրկնակի բեռան տակ: Մենք շատ խոսեցինք, ավելի ճիշտ ողբացինք: Վերջապես ես վեր կացա և մեկն-

եցի նրան մի թղթապանակ: Դրանք տպագրության համար պատրաստի հայկական արձանագրությունների ժողովածուներ էին՝ Կեչառիսի, Տեղերի և այլ հուշարձանների: Ինքն էր ցանկացել, որ թողնեմ իր մոտ: Օրբելու դեմքին երևաց ծռմռված մի ցավոտ քմծիծաղ: Նա մոտեցավ իր սեղանի դարակին, գրպանից հանեց բանալին, մտցրեց անցքը, սկսեց շուռումուռ տալ և ինձ նայել: Ես ոչինչ չհասկացա: Տեսնելով իմ դեմքի անիմաստ արտահայտությունը, նա բացատրեց.

– Կողպեքը փչացրել են, գիշերը պահարանները քրքրել են առանց ինձ, հասկացա՞ր,– ավելացրեց նա:

Ամեն ինչ հասկացա, իհարկե, հասկացա և սարսափեցի, մի՞թե նրան ևս վտանգ է սպառնում: Նա կարծես հասկանալով իմ մտքերի ընթացքը՝ գլխով դրական նշան արեց: Մենք գրկախառնվեցինք ջերմորեն և երկար, յուրքանչյուրս զգում էր, որ դա վերջինն է լինելու, որ այլևս իրար չենք տեսնելու, ես հեկեկում էի երեխայի նման ...

Երեկոյան մեկնեցի Լենինգրադից և մյուս օրն արդեն Մոսկվայում էի: Թեև սիրտս բոլորովին ջախջախված էր, բայց ուզեցի խոսքս պահել՝ Հմայակին տեսնել: Դուռն իմ առաջ բացեց նրա կինը՝ սև հագած և արցունքն աչքերին: Անմիջապես հասկացա և սարսափեցի: Պարզվեց, որ այդ նույն չարաբաստիկ 6-ի գիշերը տարել էին նաև Հմայակին և բազմաթիվ այլ հայերի: Փետրվարի 6-ի գիշերը հայ մտավորականության սև օրն էր Ռուսաստանում: Մոսկվայում մնալ այլևս չկարողացա, անմիջապես կայարան վերադարձա և շարունակեցի ճամփաս դեպի Կովկաս:

Հասա Թիֆլիս: Ըստ սովորականի իջա ծնողներիս մոտ՝ մի քանի օր մնալու համար, բայց մի երկու գիշեր հազիվ դիմացա, ինձ քաշում էր Երևանը, ինձ տանջում էր կասկածը, արդյոք ինչե՞ր էր կատարվում այնտեղ:

Երևանն իմ պաշտելի քաղաքն է, իմ հայրենիքի, նրա կուլտուրայի սիրտը, այնտեղ էին իմ ամենահարգելի, ամենասիրելի մարդիկ, հայ կուլտուրայի ռահվիրաները: Իմ հոգին հազար թելերով կապված է Երևանի և երևանցիների հետ: Բայց նրանք այս անգամ ինձ չէին սպասում, նրանք չկային այլևս: Այս անգամ ինձ սպասում էր թշնամական ձեռքը՝ Չեկան:

Ես ապրում էի Տերյան փողոցի վրա, նորակառույց բազմահարկ տան մեջ, որը կրում էր «մասնագետների տուն» անունը: Այդ շենքի ամենավերին՝ հինգերորդ հարկում էր իմ բնակարանը: Չորս սենյակից բաղկացած մի բնակարան տրված էր ինձ և իմ ընկեր Ս-ին: Մեր մուտքն ընդհանուր էր, ապա նախասենյակի միջից բաժանվում էր: Ես ապրում էի մենակ: Այդ պատճառով էլ քաղաքից մեկնած ժամանակ, թե միջանցքի և թե բնակարանի բանալիները թողնում էի նրանց մոտ: Բարձրանալով մեր մուտքի մոտ, ծեծեցի դուռը, քիչ անց լսվեց ոտքերի ձայն, ապա դուռը բացեց Ս-ի մայրը: Ինձ տեսնելով նա քարացած կանգ առավ և բարևիս էլ չպատասխանեց. – Ի՞նչ է պատահել, մայրիկ,– զարմացած հարցրի ես: Նա հազիվ սթափվեց և լուռ ինձ ներս թողեց, դուռը զգուշորեն փակելուց հետո մոտեցավ ինձ և շշնջաց.– Գիտե՞ս Սեդրակ, մի 7–8 օր առաջ կեսգիշերին չեկիստները եկան և քեզ հարցրին:

Մի րոպեի մեջ հասկացա ամեն ինչ. ապա, դառնալով դեպի շվարած պառավն, ասացի.

– Ոչինչ, մայրիկ, սենյակիս բանալիները տուր: Մայրիկը բերեց բանալիներն ու հեռացավ:

Բացելով դուռը, մի անկյուն նետեցի ձեռքիս ճամպրուկներն ու նստեցի: Իմ մտքով հազարավոր սև մտքեր էին անցնում, մեկը մյուսից ավելի սարսափելի ու հուսահատական, բայց երկար մնալ տանը չկարողացա: Մենակությունը ճնշող էր և վերջապես պիտի իմանայի՝ ինչ էր կատարվում քաղաքում: Մտա իմ աշխատանքի պաշտոնատները՝ թանգարան, Հնությունների կոմիտե, Ակադեմիայի ֆիլիալ: Ամեն տեղ կիսովին դատարկված, ավերակ հիմնարկներ, մնացողները շրջում էին ուրվականների պես, սարսափահար, ոչ ոք իր տեղում նստել չէր կարողանում: Կոմիտեն իմ աշխատանքի հիմնական վայրն էր: Վերցրեցի այնտեղից իմ բացակայության ժամանակ ստացված նամակներն ու լրագրերը, հարցրի թե ինձ հարցնողներ եղե՞լ են: Հայտնեցին, որ լուսժողկոմատից երկու երեք անգամ հարցրել են հեռախոսով և վերջն էլ տեղեկացել, թե երբ պիտի վերադառնամ: Այդ էլ պարզ էր ինձ համար, դա անշուշտ Չեկայի գործերն էին: Մտա փոստ: Մոսկվայից և Լենինգրադից 5–6 արկղ գրքեր էի ուղարկել: Ստացա դրանք և տուն տարա:

Ինձ համար ամեն ինչ պարզ էր, Չեկան ինձ փնտրում է: Նետվեցի անկողնու վրա, մոռացա քաղցն ու ծարավը, վերհիշեցի այն կարճատև կյանքը, որ անց էի կացրել և որն արդեն ընդհատվելու վրա էր: Գաղթի, սովի ճիրաններում մեծացա, ինչպիսի դժվարությամբ կարողացա ուսում ստանալ և սիրածս մասնագիտությունը ձեռք բերել, ապա ի՞նչ դաժան պայմաններում էինք այդ մասնագիտությունը գործադրել կյանքում. ղեկավարները միանգամայն անտարբեր էին դեպի մեր աշխատանքը՝ հնագիտությունը: Ինչ հնագիտություն, երբ մենք հինը պիտի քանդենք, նորը շինելու համար: Շրջաններում կոմսոմոլները բացարձակ թշնամանքով, ծաղր ու ծանակով էին վերաբերվում մեզ: Բայց այդ պայմաններում մի խումբ անձնուրաց մարդկանց հետ շրջում էինք Հայաստանի սար ու հանդը, հետազոտում մեր ժողովրդի ստեղծագործ դարավոր կուլտուրայի սքանչելի հուշարձանները: Չափագրում, լուսանկարում, արձանագրությունները վերծանում, սոված, պատառոտված հագուստներով, ոտքով, լավագույն դեպքում մի էշի վրա բարձած մեր գործիքները քայլում էինք ... Յոթը տարվա այդ տառապանքի արդյունքները թափված էին դարակներում և այժմ ենթակա են ոչնչացման: Այդ հսկայական նյութերից մի քանի լրարիկ հոդվածներ են միայն լույս տեսել, մնացածը պիտի կորսվի ինձ հետ միասին: 37 տարեկան եմ՝ դեռ նվիրված աշխատանքին: Նույնիսկ ընտանիք կազմելու ժամանակ չունեցա: Այժմ վերջ կյանքիս և այն բոլորին, ինչ որ կարողացել էի անել: Տխուր է, սրտամաշ կերպով տխուր, բայց ինչ իրավունք ունեմ ապրել, երբ ինձ նմաններն են մոռացվում, հազար անգամ ավելի լավերը և պետքականները: Դուրս մնալն այդ պայմաններում դասալքություն է, դժբախտ հասարակության մեջ երջանիկ անհատը՝ դավաճան է:

Ներս մտավ հարևանս՝ Ս-ն: Նա անսովոր շփոթությամբ ու սառնությամբ ձեռքն ինձ մեկնեց: Խոսքեր չէինք գտնում, անհարմար վիճակի մեջ էինք. ինչ խոսք կարող էի գտնել ես, միայն կտակ կարող էի անել: Իմ միակ արժեքներն իմ ձեռագրերն ու գրադարանն էր, որոնց մասին պարտավոր էի հոգ տանել: Սկսեցի նախ գրադարանից: Խնդրեցի Ս-ին, որ նրա մոտ տեղափոխեմ գրադարանիս գոնե լավագույն, հազվագյուտ գրքերը՝ մտածելով, որ եթե վերադառնամ, գոնե դրանք փրկված կլինեն, եթե ոչ՝ գոնե հասկացող ու արժեքավոր մարդու ձեռքում կմնան, սակայն նա սարսափահար մերժեց: Ձեռագրերի մասին այլևս ես լռեցի, իսկ Ս-ն շտապ հեռացավ:

Ի՞նչ կզգա մահամերձ մարդը, եթե իր հարազատ եղբայրը վերջին րոպեին մերժում է նրա խնդրանքը՝ հոգ տանել իր որբ մնացած միակ զավակին: Ի՞նչ կզգա ջրում խեղդվողը, երբ տեսնում է, որ հարազատ ընկերը իր ձեռքին եղած պարանը մերժում է նրան՝ օգնության նետել:

Ս-ի հետ մենք քսան տարվա հարազատ, ամենամտերիմ ընկերներ էինք եղել, մենք ընկերներ էինք դեռ աշակերտ ժամանակ, ապա միասին եկել էինք Երևան, մտել միևնույն ֆակուլտետի միևնույն կուրսը: Ուսանողության առաջին օրից սկսած տասը երկար տարիներ մի խարխուլ սենյակի մեջ, մի հարկի տակ ապրել միասին, կիսել էինք իրար հետ հարազատորեն մեր պատառ հացն ու ջուրը, վիշտն ու ուրախությունը, և այժմ նա մերժեց նույնիսկ տպագրված, իրենց վրա անհատական պատկանելության ոչ մի նշան չունեցող գրքերը նույն բնակարանի մեջ, մի սենյակից մյուսը տեղափոխելու իմ խնդրանքը: Ծանր էր հարվածը, խիստ ծանր, ոչ մի վախ ու սարսափ նրա այդ քայլն արդարացնել չի կարող:

Չորս-հինգ ամիս առաջ իմ ընկերներից մեկը, որի հետ ես ավելի կարճատև ու ավելի քիչ մտերմություն ունեի, քան Ս-ի հետ, փողոցում հանդիպեց, հայտնեց որ սպասում է ձերբակալման և խնդրեց, որ իր գրադարանի լավագույն մասն ինձ մոտ տեղափոխի: Իհարկե համաձայնվեցի և նա երեք մշակների բարձած, պահարանով միասին բերեց այդ գրքերը: Ինչպես մերժել, ի՞նչ մարդկային իրավունքով: Հարազատ ընկերոջից ստացած հարվածը սարսափելի է, այդ հարվածն ինձ բոլորովին ոչնչացրեց:

Երեկոյան ինձ մոտ եկան երկու ընկերուհիներ: Նրանք գիտեին իմ դառը վիճակը և ամեն կերպ աշխատում էին ցրել իմ վշտերը, զվարճացնել ինձ: Նրանք ընթրիք պատրաստեցին, գինի դրեցին սեղանին, երբ վերջացրինք այդ բռնազբոսիկ «զվարճությունը», խնդրեցի, որ նրանք գնան: Ենթարկվեցին, հասկացան, գնալու ժամանակ հարցրին, թե ոչինչ չե՞մ ուզում տալ իրենց: Զգացվեցի չափազանց, շտապ կերպով երկու թղթապանակի մեջ լցրեցին իմ պատրաստի գործերի ձեռագրեր և տարիների հնագիտական ճամփորդությունների հուշատետրեր: Ժենյան ասաց, որ դրանք Հ-ի մոտ կպահեն, որովհետև իրենց տունն էլ ապահով չէ, փեսան՝ Կ-ն, որ պատասխանատու աշխատող կոմունիստ էր, շաբաթներով առանց հանվելու էր պառկում և ամեն օր ձերբակալման սպասում: Ժենյան այդպես էլ արել էր, սակայն ապագան ցույց տվեց, որ ամեն ինչ իզուր էր: 37–38 թվին Ժենյան և Հ-ն անփորձ մնացին, բայց պատերազմի նախօրյակին 1941 թվի

սկզբներին նրանք երկուսն էլ ձերբակալվում են և Հ-ի մոտից տարվում ու ոչնչացվում են նաև իմ ձեռագրերը: Հ-ն ավարտելով աքսորի տարիները, 1948 թվին վերադարձավ, բայց իմ լավագույն ընկերուհի Ժենյան Միջին Ասիայի անապատներում կնքեց իր տանջված կյանքի մահկանացուն՝ հազարավորների նման:

Ընկերուհիներիս գնալուց հետո, իհարկե, հանգստանալ չկարողացա, մինչև լուսանալը պտտվում էի սենյակիս մեջ՝ ծխելով և մերթընդմերթ թունդ թեյ խմելով: Լույսի շողերը միայն փոքր-ինչ հանդարտեցին իմ խառնափնթոր մտքերը: Գիտեի, որ Չեկան լույսը չի սիրում այնպես, ինչպես՝ գիշատիչ կենդանիները: Սև գործեր կատարողները սև գիշերներ են սիրում:

Առանց հանվելու ձգվեցի անկողնուս վրա և ննջեցի մի քանի ժամ: Մյուս օրը փետրվարի 15-ն էր: Սենյակս ինձ բանտից ավելի խեղդող էր թվում, դուրս եկա թափառեցի Երևանի փողոցներում, առանց որևէ տեղ մտնելու, խուսափում էի ծանոթներից և բարեկամներից: Իմ մեջ մեռել էր կյանքի զգացողությունը, կտրվել էին մարդկանց ու կյանքին կապող իմ սրտի բոլոր կապերը և իմ հոգին անջատվել էր աշխարհից: Վաղ երեկոյան տուն վերադարձա և սպասում էի Չեկային: Փռվեց փետրվարյան պարզկա և ցուրտ գիշերը: Շրջապատս լուռ ու խաղաղ էր, բնությունն իր հավերժական ու անբացատրելի օրենքների, մարդիկ՝ Չեկայի սարսափի ազդեցությամբ: Իմ բակի կողմի պատշգամբից երևում էին Մասիսների վեհափառ գագաթները, իսկ փողոցի կողմի պատշգամբից՝ Քանաքեռի առապարներն ու ես ճամփորդում էի բնակարանիս մեջ՝ մի պատշգամբից մյուսը, դարանի մեջ մահվան դատապարտվածի նման: Ես սպասում էի: Իմ ջղերը պրկվել էին ծայր աստիճան և բարկանում էի, թե ինչու՞ են ուշացնում, ես վերջակետի էի ձգտում ...